## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնս քաղցր պարտք է համարում իւր սրտագին շնորհակալութիւնը յայտնել այն ամենքին, որոնք հեռագիրներով, նամակներով և անձամբ՝ շնորհաւորեցին «Լումայի» ամսագիր դառնալը և տասնամեայ շրջան մտնելը։

—

«Լումայի» ամսագիր դառնալու թոյլտուութիւնը ուշ ստանալը, ինչպէս նաև ամսագրին անհրաժեշտ կարգադրութիւնները հարկադրեցին մեզ ամսաթերթի հրատարակութիւնն սկսել ներկայ մարտ ամսից։ Այդպիսով 1905 թուին մենք տալու ենք 10 համար։ Ամսաթերթ Լուման առհասարակ պիտի բաղկանայ 160 երեսից, առաւել մեծ գիրքով քան ունէր երկամսեակը, ինչպէս այդ կերևի ներկայ համարից։ Սակայն պակաս 2 համարները լրացնելու նպատակով մենք ամեն համարում 32 երես աւելի պիտի տանք, որով մեր բաժանորդները կը ստանան ճիշտ այնքան, որքան որ պիտի ստանային երբ հրատարակէինք 12 համար։ Իսկ այս համարը Բագուի դէպքերի առիթով պարունակում է 16 երես աւելի։

—

1905 թուին «Լումայ» ամսագրի մի մի օրինակ նուիրել են՝

1, Մեծ տ. Եղիսաբէդ Սարգսեան Միրզոյեանց՝ Վարագի ժառանգաւորաց ուսումնարանին.
2. Նոյնը՝ Վանի Կենտրոնական ուսումնարանին.
3. » Վանի Սանդխտեան օրիորդ. ուսումնարանին.
4. » Վանի Ցանկոյների եկեղեցու ուսումնարանին։
5. Ռոստովից՝ Զախըրեան և ընկերութիւն՝ Մաստարա գիւղի հայ հասարակութեան։
6. Մեծ տ. Կատարինէ Նադիրեան՝ Շուլաւէրի հայ ուսումնարանին։
7. Սիմֆէրօպօլցի մի խումբ հայեր իրանց ծխական դպրոցին։
8. Մեծ. պ. Կ. Ն. Հաքիմեանը՝ Պ. Բուրգի հայ ուսանողներին։

—

Որովհետև այս տարի լրանում է «Լումայի» հրատարակութեան տասն տարին, խմբագրութիւնս տարուայ վերջին համարի հետ կտայ «Լումայի» 10 տարուայ նիւթերի մանրամասն ցուցակը։